



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

— հուլիսի 2018 թվականի №—Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի №318Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հունիսի 18-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ութ ամսով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Շորժա 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №318Ա որոշմամբ «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0609 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ№0609 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի հուլիսի 12-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի մարտի 12-ը» բառերով:
2. «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ№0609 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով

«Շորժա 1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

- 1) մեկամսյա ժամկետում «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 27-ի N°COD/0607 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
- 2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի ապրիլի 26-ը գործողության ժամկետով:
3. «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐՆԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 12-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ